

Հայաստանի Հանրապետությունում ապաստան գտած սիրիահայերին տրամադրվող աջակցության վերաբերյալ

Մեծահարգ տիկին նախարար,
նախագահության հարգարժան անդամներ,
հարգելի՛ ներկաներ,

ձեզ եմ ներկայացնում ՀՀ-ում ապաստան գտած սիրիահայերին տրամադրվող աջակցության վերաբերյալ համառոտ տեղեկանք: Ինչպես գիտեք, սիրիական պատերազմի հետևանքով մոտ 21-22 հազար հայեր են տեղափոխվել և հաստատվել Հայաստանում, որոնց հիմնախնդիրները Հանրապետության նախագահի հանձնարարությամբ համակարգում է Սփյուռքի նախարարությունը: Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծվել է սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով, իսկ կառավարության որոշմամբ սիրիահայերի հետ իրականացվող աշխատանքը համարվում է գերակա խնդիր:

Անցած 5 տարիներին միջգերատեսչական հանձնաժողովի 41 նիստ է գումարվել, որոնցում քննարկվել են 150-ից ավելի խնդիրներ և մշակվել նրանց լուծման կառուցակարգեր: Սիրիահայերի հետ տարվող աշխատանքները ոչ թե կրում են մասնակի, այլ համակարգված բնույթ, այստեղ Հայաստանյան բոլոր գերատեսչությունները գրեթե այդ գործին են լծված Սփյուռքի նախարարության գլխավորությամբ: Մեզ օգնում են նաև հասարակական, բարեգործական կազմակերպություններ և կառույցներ, իսկ Սիրիայում այդ աշխատանքներն իրականացնում են ՀՀ դեսպանությունը, հյուպատոսությունը, ազգային առաջնորդարաններ, ազգային իշխանություններ, Սիրիահայության շտապօգնության և վերականգնումի մարմին, Բերիո թեմի մամլո խոսնակ, Սիրիայի խորհրդարանի պատգամավոր Ժիրայր Ռեիսյան և այլք: Ձևավորվել են աշխատանքային խմբեր. Դրանք են՝ բնակարանային, աշխատանքային, առողջական, կրթական հարցերով աշխատանքային խմբեր: Ընդունվել է Հանրապետության կառավարության 20-ից ավելի որոշում, կատարվել են փոփոխություններ 2 օրենքներում: Անցած 5 տարիների ընթացքում ՀՀ քաղաքացիություն է ստացել շուրջ 19.500 սիրիահայ, իսկ կացության կարգավիճակ 2.300-ից ավելի: 2012-17թթ. ընթացքում ժամանակավոր կացարանով կամ բնակարանային վարձով ապահովելու խնդրով Սփյուռքի նախարարություն է դիմել շուրջ 4000 ընտանիք, բնակվարձերի փոխհատուցումն իրականացվում է համահայկական, միջազգային կառույցների աջակցությամբ: Անցած 5 տարիների ընթացքում 3.500-ից ավելի սիրիահայ դիմել է Սփյուռքի նախարարություն աշխատանքով ապահովման հարցով. արդյունքում շուրջ 3.000 սիրիահայ ապահովվել է

աշխատանքով, ևս 500 սիրիահայ աշխատանքի է տեղավորվել սիրիահայերի կողմից հիմնված բիզնեսներում: Անցած 5 տարիներին առողջապահական խնդիրներով Սփյուռքի նախարարություն է դիմել 4.000-ից ավելի սիրիահայ: Առողջապահական խնդիրները լուծվում են պետական պատվերի շրջանակներում Սփյուռքի նախարարության միջնորդությամբ: Պետական պատվերի շրջանակներում չներառված բուժօժանությունները ֆինանսավորվում են ՄԱԿ ՓԳՀ-ի, Հայաստանի համահայկական հիմնադրամի, Հայ բարեգործական ընդհանուր միության, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից նորից Սփյուռքի նախարարության միջնորդությամբ: Սփյուռքի նախարարություն կրթական հարցերով դիմել է 3.300-ից ավելի սիրիահայ՝ մանկապարտեզի, դպրոցի, ԲՈՒՀ-երի խնդիրներով: Յուրաքանչյուր տարի միջինը 400 սիրիահայ ուսանողի ուսումնական վարձերի փոխհատուցում է կազմակերպվում: Վերջին 3 տարիներին այս հարցում համագործակցում են ՀՀ կառավարությունը, Հայ բարեգործական ընդհանուր միությունը, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամը: Դրանից առաջ աջակցել են նաև Հայաստանի համահայկական հիմնադրամը և Քուվեյթի պետությունը: Կազմակերպվել են սիրիահայ գործարարների հանդիպումներ Հանրապետության նախագահի, Հանրապետության վարչապետի, պետական տարբեր մարմինների ղեկավարների հետ: Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի հետ համատեղ իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ սիրիահայերի գործարար ծրագրերի հաստատում և ֆինանսավորում:

Անցած 5 տարիներին իրականացվել է 6 օդանավ մարդասիրական օգնության տեղափոխում Հայաստանից Սիրիա, որը բաշխվել է երկրի բնակչությանը անկախ ազգային պատկանելիությունից: Հայաստանում սիրիահայերի ինտեգրման խնդիրների դյուրացնելու նպատակով Սփյուռքի նախարարությունն իրականացնում է տարաբնույթ միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, ցուցահանդես-վաճառքներ, տոնավաճառներ, շնորհանդեսներ, ամառային հանգիստ, ամանորի միջոցառումներ սիրիահայ երեխաների համար և այլն: Սփյուռքի նախարարությունը պետության անունից նաև խնդրանքներով դիմել է մի շարք պետությունների և կազմակերպությունների՝ ֆինանսների աջակցության խնդրանքով, և մեզ 2013թ. օգնել են Քուվեյթի պետությունը՝ 200.000 դոլար, Ավստրիայի հանրապետությունը՝ 600.000 եվրո, ՌԴ՝ 275.000 դոլար: Ուզում եմ հայտարարել, որ այս գումարները եկել են ծրագրերի տեսքով՝ սնունդ, հագուստ, կրթության, մշակույթի ոլորտում, և դրանք կանխիկ չեն եկել, և իզուր եմ ոմանք ասում մեզ չեն հասել: Կրկնում եմ դրանք ծրագրերի տեսքով իրականացվել են սիրիահայերի համար:

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը կրթական ոլորտում ծախսել է 264 մլն դրամ, առողջապահության ոլորտում՝ 67 մլն, գյուղատնտեսական ոլորտում՝ 72

մլն, մշակութային ոլորտում՝ 10 մլն, հումանիտար աջակցության ոլորտում՝ 328 մլն, Օժանդակություն սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն հասարակական կազմակերպությանը՝ 41 մլն, ընդհանուր առմամբ ծախսվել է 784 մլն դրամ: Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի ներկայացուցչությունը 2011թ.-ից առ այսօր ծախսել է 26 մլն, «Իզմիրլյան» հիմնադրամը հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցության նպատակով ծախսել է 72 մլն, դոնորներ են եղել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Իզմիրլյան բժշկական կենտրոնը: Հայ օգնության միությունը ծախսել է 21 մլն դրամ, Հայ օգնության ֆոնդը՝ 62 մլն դրամ, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական կլոր սեղան քարեգործական հիմնադրամը ծախսել է 110 մլն դրամ: ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը այս 5 տարիների ընթացքում ծախսել է 2 մլրդ 461 մլն դրամ: Հայկական կարմիր խաչ ընկերությունն իր ծրագրերի վրա ծախսել է 1 մլրդ 239 մլն դրամ: «Օքսֆամ Հայաստան» և «Օքսեջեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամը 294 մլն դրամ, «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը 1 մլրդ 601 մլն դրամ, «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը 231 մլն դրամ, «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպությունը 96 մլն դրամ, «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը 1 մլրդ 174 մլն դրամ, «Ամբոբ Հայաստան» հիմնադրամը 98 մլն դրամ, «Կազա» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը 54 մլն դրամ, Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրթեմբերգ երկրամասային կազմակերպության մասնաճյուղը բացել է գրության խոհանոց, այս տարվա առաջին 6 ամիսներին ծախսել է 6 մլն դրամ, Հայաստանում սիրիահայերի կողմից ստեղծված հասարակական կառույցները 4-ն են, և այդ կառույցները շատ լավ աշխատել են այս տարիների ընթացքում: Առանձնացնում են՝ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությունը, դոնորներ են հանդիսացել, թվարկում են մի քանիսի անունները, Սփյուռքի նախարարությունը, Հայաստան համահայկական հիմնադրամը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, Քուվեյթի պետությունը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիրը, «Գրանդ Քենդի» ընկերությունը, «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական կլոր սեղան» բարեգործական հիմնադրամը, «Ամբոբ Հայաստան» հիմնադրամը, «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպությունը, Սիրիահայերի օգնության հիմնադրամը, Որբացած հայության օգնության ընկերությունը, «Գառնի» հիմնադրամը, Հայ օգնության ֆոնդ, անհատ բարերարներ Հայաստանից և Սփյուռքից և այլ կազմակերպություններ: «Հալեպ» հայրենակցական բարեսիրական հասարակական

կազմակերպությունը նույնպես կայացել է և կատարել շատ լուրջ աշխատանք անցած մի քանի տարիների ընթացքում, այս ուղղությամբ նա ծախսել է 587 մլն դրամ, «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպությունը զբաղվում է ավելի շատ սիրիահայ գործարարների տնտեսական ինտեգրման հարցերով, ցուցահանդես-վաճառքների կազմակերպում, սիրիահայ ձեռներեցների շահերի ներկայացում և լոբինգ: «Սիրիահայերի միություն» հասարակական կազմակերպությունն այսօր էլ իր գործունեությամբ ինչպես դոնորների, այնպես էլ պետական կառույցների համակրանքն է շահել իր կատարած աշխատանքով: «Քեսաբ» հայրենակցական միավորումը ընդհանուր ծրագրերի շրջանակում շեշտադրում է կատարում հոգևոր, մշակութային խնդիրների վրա:

Ահա ընդհանուր գծերով այն, ինչ կուզենայի ներկայացնել, ես շատ-շատ մանրամասներից հեռու մնացի, որպեսզի խնայեմ ժամանակը, եթե հարցեր կլինեն, կպատասխանեմ, եթե ոչ, շնորհակալություն լսելու համար:

Ֆիրդուս Չաքարյան

ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար

սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար